

Թէպէտ լի էր Եզնիկ զբազանօք՝ իւր վիճակի բնագարձակութեան և ժամա-
 նակին աղիտալի պատահարաց համար, սակայն միայն « 'ի սիրոյ բարեկամաց »
 յանձն կ'առնու այդ ծանր գործը, ծանր՝ նկատմամբ հանգամանաց ժամանակին
 և ոչ իւր կարողութեան: Դարձեալ որովհետև նա բնութեամբ սիրող չէր կը-
 ախներու, և ոչ հետամուտ հակառակորդաց նուաճման. այլ կը գրէր 'ի ջա-
 տագոյութիւն ճշմարտութեան և ցանկանալով նոցա դարձին, որպէս կ'ըսէ .
 « ոչ եթէ անիրաւութեամբ ինչ յաղթել ջանամք, այլ իրաւամբ զճշմարիտն
 ուսանել », (էջ 68): Շատ պիտի զարմանամք, եթէ մտածեմք՝ թէ Եզնիկ
 եկեղեցւոյ հալածողաց ձեռքէն փախած ծածկուած ամբողջի կամ ժայռի մի
 խորշը, չի դադարի որ միայն հուռել իւր հօտը, այլ և բովանդակ Հայաստանի
 կողմանէ կուռել մղորութեան դէմ և այնու խրախոյս տալ հաւատացելոց՝ ու-
 կեղէն լեզուաւն և իմաստիբք: Հայ ազգն այլ կարող է պարծիլ իւր Ոս-
 կերբերանբու և Ալմանասներու վերայ:

Հ. Վ. Ս.

Շարայարեղի

ՀԱՅԿԱԿԱՆ
 ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յ'էջ 225)

60. Աղուէսիկ.

Այս խորհրդայ կենդանւոյն անուամբ քանի մի բոյսեր կան՝ իրարմէ տարբեր
 ցեղերէ. այս առաջինն անունն ի լրոյ է, և թուի թէ աղուիսու սիրած խոտ. ստու-
 դելի է, և նախ աղուիսու խոտակեր ըլլալն: Բայց հին բժիշկը նոյն իսկ Աղուիսու
 զանազան մասերէն դեղեր հնարած են:

61. Աղուէս-խրտուկ.

Չայս նշանակած է մեր Մշեցի Հ. Պօղ. Մէհէրեան, իրրեւ կէս մարդաշափ
 ճիւղաւոր խոտեղէն բոյս մի, դեղին գնտաձեւ ծաղիկով, ախարժ ուտելի ոչխա-
 րաց. իբր թէ, երբ ճիւղերն հովէն խրուած քուլին՝ աղուէսք խըրտոցի ձայնէն
 կու վարեն: Փափագելի է որ Եւրոպացի դիտնականք տեսնեն և իմացընեն ու-
 սումնական անունը, կամ այնպիսի անուամբ կ'ըքեն:

62. Աղուէսու խաղող.

Արարերէնն ալ նոյն նշանակութեամբ « Անսայ ըլ-Մայրապ. նոյնպէս Փ. Raisin

de Renard. Իսկ Լ. Paris quadrifolia (Պարիս չորստերեւնի), ըստ որում և Փ. Herbe à Paris. այս քաղաքս Փռանկաց մեծ քաղաքը չի նշանակեր, այլ անստոյգ է պատճառն. ըստ ոմանց տերեւներուն հաւասար ըլլալէն (Pares, Pair), զոր Ստեփանոս Ռոյքեան խաչատերեւռոյ անուանէ: — Մեր բժշկարանք զանազանն կամ շիբոթեն. մէկ մի ըսելով, « Յանապ ըլ-Սյայրայ. Ինքն խոտ է և սեւ խաղողի ունի, » և կանաչ տերեւ. և աղէկն ի Հրային տեղն լինի. և բնութիւնն հովէ », և այլն: մէկ մ'ալ մի և նոյն համարին ընդ Շնխաղոյոյ. Իրաւ նմանք են, այլ ետքին յատկապէս կոչի Լ. Solanum nigrum, մենք ալ յիշեմք ի կարգ Ծ բառից:

63. ԱՂՈՒՏԱՆԸ-ՉՈՒՔ.

Արարերէնն ալ նոյնանիչ է, Խոնսար ըլ-Սյայրայ, կամ Խօսառ էլ-Թալիպ. Լ. Satyrion կամ Satyrium. Ռ. Кукышникъ. Իսկ արմատն արարացի բառով Salep կոչուի, որպէս և յարեւելս ալ ծանօթ է այս Սյալեպ անուամբ. զոր համառօտիւ բացատրէ բժշկարան մի. « Խոտի տակ է, Սյալիպ կ'ասեն, կու եփեն ի չէրպէթի » հետն և կու խմեն: » Աւելի երկայն գրէ Ամիրտ. « Իր տերեւն ի Քուռաթի » տերեւ կու նմանի. երկու տակ ունի, մէկն ի լի է և մէկն դարտակ, և ինքն շրտ » ցեղ է. և լաւն այն է որ մէջն լինի ի լի, և ինքն տաք և գէճ է... Եւ ցեղմն » այլ կայ որ տերեւն կարմիր կու լինի. ով որ զինքն ի տեղացն հանէ՝ նա յայն » ձեռքն կ'առնուի. և իր գեղն այն է՝ որ ալվի զայն խոտն առնուն և այրեն, և » եզով և մոմով սորորն և ձեռացն ի վերայ դնեն. օգտն և լաւցընէ: Եւ ասեր է » զրոտս ժողովողն, թէ լաւն այն է՝ որ իրմէն սերման հոտ զայ... Եւ լաւն » այն է որ ծանար լինի և ամուր և գէր. և շատ զօրութիւնն առնէ: » Նորագոյն բժիշկ մի գրէ. « Աղուեսուձուքն է խոտ մի. տակն զերկ երկու հակիթ է. ծա » ղիկն կապուտ է, և կայ որ դղամի է (պէլլամի?) և տերեւն փրասայի նման է. » և ոմանք այս խոտիս Եղբայրսպան ասեր են, և կու լինայ որ հուկըթի մէկն գէր » և սրարարտ և մէկն նուազ. և ծաղիկն մարդոյ կերպ է: » Ամիրտովկաթ մեղի կարեւոր և աւելի զուտ հայկական տնուն մ'ալ կու տայ այս արմատիս, Կոտրիլոյ տակ, որով բոյսն ալ գուցէ ըսուէր կոտրուի կամ կտրուի: Եւ նոյնպէս կարեւոր է լատին անունն ալ յիշելով ըսածն, Պուզիտան բառոյ կարգին, ըստ Պէյթարայ. « Պանկն Սյադիրիօն ասէ. ինքն դեղ-մն է Հնդի. հաստ և բարակ լինի. լաւն այն » է որ սպիտակ լինի... Մինհանին տէրն ասցել է, թէ ինքն փայտ է Հնտի. և » այս ալ չէ ստոյգ. և ստոյգն այն է որ ինքն յԵգիպտոս լինի և ի յայ տեղ չի » լինիր. և լաւն այն է որ սպիտակ լինի, և ի վերայ գիր և խազ և ճանապարհ » երեւնայ, և հաստ լինի և նոր լինի: » — Այս ըսածները առած է մասամբ ի Պէյթարայ, որոյ վրայ տարակուսեր են գիտնականք. ոմանք համարին Կուռօթիկ (Orobis) մի, և ոմանք պարզապէս Սյադիրիօնի տեսակ մի է կ'ըսեն, որով յարգ կ'ունենայ մեր Ամասիացոյն վկայութիւնն, և այնչափ աւելի՝ որչափ որ Պէյթար չէ յիշած զայս: Երկու կարծիքն ալ կու միտրանին, որովհետեւ այդ Պուզիտանն ալ համացեղ է Կոտրիլոյ տակին և կոչուի հայերէն Շան-ձուք: — Պէյթար՝ ճիֆո-էֆ-րիտ անուամբ բոյս մի կու ստորագրէ, որ պարսկերէն՝ խեղեփ (Չուխասկ) նշանակէ կ'ըսէ, այսինքն մէկտեղ ծնած. Եւրոպացիք կու տարակուսին ասոր ինչ ըլլալուն, բայց Պէյթար և ուրիշ արարացի մի կ'ըսեն Աղուէսուձուք մէկ տեսակն է. Իսկ մեր Ամասիացին՝ ձ սատի շալակին մէջ միայն անունը յիշելով ճիֆո-աֆրիտ կամ

« Ճիֆտաֆրանդ, որ է կեղեւով Նուշն », կ'ըսէ. Պէյթար ալ պտուղը Նուշի կամ Ուճիի պտղոյ կու նմանցընէ: — Այս ամեն ըսուածներէն օտար՝ մեր մէկ բժշկարան « Ստուեց Հանդաղուզն՝ որ Երեքտերեւէն է », (Trifolium), և նոյնպէս կ'ըսէ, « որ է Ալուէսձուքն »: Չեմ գիտեր ինչ նմանութեամբ նոյն կու գտնէ զասոնք որովհետեւ ըստ բուսաբանից Երեքտերեւեանն կամ Աւուոյտն և Ալուէսձուքն տարբեր ցեղէ են և աննման:

64. Ալուէսու Սուսեր.

Գայիենոսի բառից մէջ Էրիոսի դիմաց դրած է. բայց յունարէն Έριον Բամբակ նշանակէ. իսկ Լ. Eryum Ոսպ է: Ուրիշ օրինակ այս հայերէնի դիմաց գնէ Ղանքոտին. Թերեւս գրուելու ըլլար Դեռեդոտոն, Leontodon, որ Առիւծու Ժանիք բան է, և կըրնայ Ժանիքն սրոյ ալ նմանիլ. կամ Leonotis, Առիւծու սկանի:

65. Ալուիճակ.

Նոյն է ընդ Խորասանիկ ըստ Հին բժշկարանի. սա ալ նոյն համարուի Լ. Staphysaria, Փ. Staphysaigre, որ ի յոյնէն առնուած են, յորում Մշաֆիս աղրիս՝ ըսել է Լեւան խաղող, անոր համար ոմանք ի մերոց Խաղողախոտ կոչեր են, բայց շեմ հանդիպած ի գիրս. Արարացին ալ նոյնպէս կ'ըսէ Զպիսի իւլ-ձեպէլ-այլ և Զպիսի պերի, որ է զլիսոյ հունտ կամ չամիչ զլիսոյ, այսինքն օլլի դեղ ըլլալուն համար. այսպէս կոչուի և առ մերային՝ ասմկօրէն, նոյնպէս և Փ. Herbe au poux. իսկ Պարսիկք կ'անուանեն Միշֆեգէն կամ Միշֆիգաձ. այս ետքի անունով գրէ Ամիրտողլաթ. « Մամիդգաձ՝ որ է Զարսիսի ըլ ձամալ. և հատկներ է գէտ » Չամիչ. յամի (ամանի) մեջ կու բուսնի, և լաւն այն է որ սեւ լինի. տաք է » և չոր է Փ. աստիճան, այրող է և ուտող է. և թէ ծամեն՝ յակոսայէն շատ » պաղամ քաշէ, և զոլլին սպանանէ. « և ակոսային ցաւուն օգտէ », և այլն: Դարձեալ գրէ առանձին. « Մամիդգաձ. ինքն ծառի պտուղ է, և սեւ և տափակ, » և շատ (սանի) օգտէ. Հոռամքս լինի իր ծառն, աղեկն տաք է և չոր », և այլն: Նոյն բաները գրոց մէկ ընտիր օրինակի մէջ Թուրքարէն ալ գրուած է*:

66. Ալուիսակ.

Գուցէ վերինն ըլլայ (Ալուիճակ). բժշկարան մի կ'ըսէ. « Թէ ձեռն ուսել լինի » զտրա (շուտակի) և զՀոռոմ Ալուիսակն ընդ յիրար ծծծէ և ի վերայ գիր »: Ուրիշ տեղ ալ կ'իմացընէ Ալուիսակի ինչ ըլլալը. « Հոռոմ Ալուիսակ՝ որ է Օ. » շինարն ու Հոռոմ ըսելով ալ կ'իմացընէ որ տեսակ մի է սա, իսկ բուն Ալուի. ճակն ուր տեղացի է:

67. Ալուորիկ.

Տես Ալուորիկ կամ Հալուորիկ. նոյն են:

*) Մամիդգաձ, որ է Զարսիս ու-ձեպէլ՝ եպոսն ուղղեմի (խոշիւ) տաք. էփէր անձեւոցըն-րին (տախիճեղը) լարլար ես զարգարայ էթեւէր՝ չօք պուլլամ չարսոյ, և այլն:

68. * Աղսուս.

« Ինքն փուշ-մն է, որ իր տերեւն նման է Շուվրաք ըլ-Պայզգին (Պատուփարտ) տե-
 » ղ րեւին. և այն գէտ վարդ-մն է, և ի վերայ գէտ բամբակ իրք-մն կու լինայ. և
 » ի լերունքն շատ կու լինայ. և ի Անդալիս (Անտալուսիս Սպանիոյ) այսոր Պա-
 » ռաս ըլ-Պանն կու ասեն », (վայրենի կամ լերան Բանգ)։ Պէյթար այս ետքի
 բառս կարծեմ շունի, եթէ ոչ նոյն համարուի Պէրսեֆանն կոչածն, որ է Լ. Մա-
 ռսա, և թուի կատուսիտտ։ Բայց Ամիրտովաթայ Աղսուսն այ երկրայելի է, ու
 բովնետեւ անկէ վերջ գրէ ուրիշ նման բառ մ'ալ Աղսուն, և կ'ըսէ. « Ինքն Մաշն
 է, և իրենն Պատաւարտ այլ կ'ասեն »։ որով վերոյիշելոյն հետ կու միանայ։
 Ոմանք վայրի կանգառ կամ կաս համարին զԱղսուս, որ շատ հեռի չէ Պատա-
 վարտէն։

69. Աղպաշար.

Վարդան Յովնանեան Լեհահայոց եպիսկոպոսն զսա և զկաղաքոյս նոյն հա-
 մարի. իսկ ետքինս կու թուի սոխարմատ կամ կոճղէզաւոր բոյս, Bulbus, և յասու
 կապէս Bulbus silvestris.

70. Աղպատ.

Թերեւս սամկորէն, բայց զուտ հայկականն կ'երեւի շատ անուանց մէջ, որ այս
 հասարակ բուսոյ արուած է ի մեր լեզուիս, որոցմէ՝ օտար լեզուաց ալ նոյնանիշ
 կամ թարգմանութիւն է Հինգտերեւեանն, Պ. Փանձանկոչառ Լ. Pentaphyllum.
 Փ. Quintefeuille, նաև Թ. « Պէշպարնագ կ'ասէ », ըստ բժշկարանի միոյ. դար-
 ձեալ յատուկ հայերէն՝ Մատնիկ. Գօտեաց ճանկ կամ Գոթեց ճանկ, Սիրա-
 լախուր կամ Սիւրալախուր. որոնք ի կարգի այբուբենից պիտի յիշուին սոսկ
 անուամբ. իսկ այս տեղ զորնք ինչ որ Ամիրտովաթ կամ ուրիշ բժշկարանք նշա-
 նակեն Պանտաֆիլիոս անուան տակ. « Ինքն Հինգտերեւէն խոտ է. աղէկն ի ջրի
 » տեղերն է. բնութիւնն հով է », և այլն. զայս Ամիրտովաթ. ուրիշ մին, « Ինքն
 » խոտ է և տերեւն հինգ, և կանաչ. աղէկն՝ նորն է »։ Ուրիշ մ'ալ. « Հինգ
 » տերեւ ունի. իր երկարութիւնը թիզ մի է. ցեղ-մն է. լաւն այն է որ հաստ
 » լինի իւրն (Պէյթար)։ Թուրքն այսոր Պէշպարնախ ասէ, և Հայն Հինգմատն.
 » երկու ճիւղ ունի և երկու ճիւղ կու բուսնի. և հինգ հինգ տերեւ ունի. տե-
 » ղ րեն նման է Անուրի տերեւին »։ Պէյթար չի յիշեր Թուրքը, այլ կ'ըսէ, թէ
 ոմանք ալ Պէնդատաքրոզն կ'ըսեն, որ Հինգմատնեայ նշանակէ, — Ոմանք ի գիտ-
 նականաց՝ հին հնգինակաց Հինգտերեւեան կոչածը՝ կարծեն թէ Potentilla ըսուած
 բուսոց մէկ տեսակն ըլլայ։

71. Աղսաղտուկ.

Մանթ խոտեղէն է, Թէպէտ ոչ այս անուամբն. Լ. Salsola. Փ. Soude. հա-
 սարակորէն ծովեղերեայ երկիրներ զտուելով՝ անոր աղէն կ'առնու, և կ'ընծայէ

կալ կամ կաչաքար ըսուած նիւթը, (Soudé, Սոտա). ասոր համար Պարսկահայք Շորան կ'ըսեն, որ աղի ջրերը նշանակէ (շոս). — Ի Հայս՝ նշանակած են տեւսողք՝ Երասխայ հովտին մէջ ալ, Ճորոխի հովտի մէջ, Կողբայ կողմերը, և այլն, զանազան տեսակներ. ինչպէս, Sals. Kali, որ սովորական կալ տուողն է. S. Clauoa (կապոյտ), S. Erioides M. B. իսկ Երասխահովտին յատուկ տեսակ մի՝ անոր անուամբ կոչած է Քոխա՝ Sal. Araxena. — Դէհրիմանեանն կարծէ թէ Ի Փոքր Հայս կ'անուանեն այս բոյսս՝ Թաննթունիկ, բայց սա տարրեր ցեղի բոյս է:

72. Աղտոր.

Ծանօթ յարեւելս և յարեւմուտս, Սումախ անուամբ, ինչպէս կ'անուանեն և Փ. Sumac, իսկ Լ. Rhus Coriaria, կաշեզործաց ասով ներկեւուն համար Ամիրա. կ'ըսէ. « Պարսկերէն թարրի ասեն և Հ. Աղտոր ասեն. ինքն երկու ցեղ կու » լինի, Խորասանի և Շամի (Ատրուց, Գամասկոսի կողմերն). և լաւն այն է որ » նոր լինի և խիստ կարմիր », և այլն: Դատ տեսակ օգուտները յիշելէն ետեւ կ'աւելցունէ անուններ ալ. « Ացցել է Պատ(էհին) թէ այսոր թարս կ'ասեն, և » Տունտում կ'ասեն և Բարս կու ասեն... Իր տերեւն հանց կապող է՝ որպէս » Ակակիայ. և զիր տերեւն թէ եփեն զմե » բուսն լուանան՝ զմազն սեւ առնէ »... Գարձեալ առանձին գրէ. « Ինքն կարմիր » պտուղ է, և մէջն կուտ լինի և թթու է, » և կըտող ուտեն. և զկեղեւն ի բան տա » նին. աղէկն՝ նորն և խիստ կարմիրն է... » Օգտէ աչից որ կծայ և արիւն ունենայ, » յորժամ եփես և զիւրն ի յաշքն օծես »: — Խորենացոյ աշխարհագրութիւնն յիշէ զԱղտոր ի Տայս:



Աճալ.

73. Աղքատի ժախ.

Արտերու մէջ կու բուսնի, երկու թիզ բարձրութեամբ, ցօղունն մեծ կորկեկ շուրջն ալ փոքրեր, որոց վերեւն են տերեւներն գոգածն: Ռամկական անունն յայտնէ որ գեղացոց տուելի է. ձմեռուան պտղածու պաշար:

74. Աճալ.

Բժշկարան մի այսպէս կ'անուանէ զՍենա Արաբաց, Թուրքարէն Սինեմաքի կամ Սէյնմաքի կոչուածն, Մէքքէէն գալուն համար. Եւրոպացիք ալ նոյնպէս կոչեն, Լ. Cassia Senna. Փ. Տենճ. Ամիրա. գրէ « Սինէմային. Ինքն կանաչ տերեւ-մն է » Ի Մաքու կու գայ, և միջոց այլ ունի. տաք ու շոր է... Ացցել է գրոցս շինողն, » թէ Սինիմաքուն լաւն այն է՝ որ տերեւն կանանջ լինի և նոր լինի, և Ի Մըր » տե՛նու տերեւ կու նմանի... Եւ ասցել է Դնս (Դրոգենիս), թէ Ի խորու տեղաց » երկք խըլտ (հիւթ?) հանէ և զանձն ուժովցընէ », և այլն:

75. Աճաս կամ Աճագ.

« Որ է Դամոնն, որ է Սարդն », ըստ Ամիրտովաթայ: Տես այս ետքի անուամբ:

76. Աճանկեր.

Բանջարեղէն է, ծանօթ ի Հայս, բայց ոչ ինձ:

77. Աճուր կամ Աճուռ կամ Հաճուր.

Շէմամ կոչուած գեղեցիկ Չմերուկն է: Ամիրա. գրէ Տաստանկոռէ (Տետու-
պուլայ Քարթլան) բառին ներքեւ. « Թուրքերէն Լանդոճ (կամ Ինչանդոճ) կու
» ասեն. ի մեր աշխարհն Աճուր կու ասեն... Ինքն փոքրկիկ զէտ Սեխներ է.
» և անուշահոտ է... Այտր Շամցիքն Շամամ ասեն. և ինքն զէտ Շամակներ
» կատուկ (խատուտիկ) է և անուշահոտ է. և թէ ուտեն՝ ուշ մարսէ, և զըղեղն
» տաքցընէ »: — Լ. Cucumis Shamam. — Սիմէոն Կամրկապցի՝ ըստ Հայոց
Վարուճգ է, կ'ըսէ:

78. Ամանկուորիկ.

Կարմրածագիկ մանր խոտ մի: Յիշն հեղինակք Մանանայի և Պանդըխտին:

79. Ամաւ. Ամաւենի.

Ըստ Ստեփ. Ռոշքեան, Պլինիոսի յիշած Quisquillum ծառն է, որ է Որդնարկ
Կարնիս, Լ. Quercus Coccifera. Փ. Chêne au Kermès. ցածկեկ տեսակ մի կաղ-
նեաց, որոյ վրայ կու կենայ, ինչպէս քանի մի ուրիշ տեսակաց վրայ ալ, Հա-
յաստանի սեփական և պատուական բերոց մէկն, Որդն Կարմրոյ, ուսկից Որդան
կարմիր ներկն:

80. Ամբասիկ.

Տեսակ մշկահոտ Տանձի. Լ. Pera moscata. Ի գրոց է թէ ի լրոյ, չգիտեմ: